

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱԲ

(Մենդյան 120 և մանվան 60-ամուսնի ատրիվ)

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ

Սրբուհի Տյուսարը ստեղծագործել է չափազանց կարճ՝ հազիվ մի քանի տարի, բայց դրական-սկսումական անուրանալի ծառայություններ է մատուցել հայ դրականությանը: Նրա երկերը հայ վիպագրության մի աստիճանն են կազմում և դրանով իսկ պատմական հետաքրքրություն են ներկայացնում մեզ համար: Տյուսարը ոչ միայն առաջին հայ վիպասանուհին է, այլև մեր առաջին գրողը, որ ձևեր է մեկնել տգիտության ու թշվառության մեջ թաղված հայ կնոջը և փորձել հասարակությունից նրա համար տղամարդուն հավասար իրավունքներ կորզել:

1

Սրբուհի Տյուսարը (Վահանյան) ծնվել է 1841 թ., Կոստանդնուպոլսի Միջագյուղ (Օրթագյուղ) թաղամասում: Նրա հայրը՝ Սարգիս Վահանյանը կեսառացի էր, մայրաքաղաքի «ընտիր և պատվական» ազգայիններից մեկը, որ մահից հետո թողել էր զգալի կարողություն՝ ապահովելով ընտանիքի բարեկեցիկ վիճակը: Մեկ տարեկան հասակում Սրբուհին զրկվեց հորից: Նրա դաստիարակությամբ զբաղվում է մայրը՝ Նազը՝ Վահան: Իր մանկական տարիների մասին Տյուսարը գրել է. «Մինչ մանկիկ էի, հայրս մեռավ, որը մնացի, սակայն որբություն չձուլալուց, այնչափ մայրս բոլորովին սեր էր և անձնվիրություն»¹: Հիշումի, Նազը Վահանը ոչ միայն «մայր էր եղական, մայր պաշտելի և փարելի», այլև ժամանակի ամենազարգացած և հարգված հայ կանանցից մեկը: Նա նույնպես կեսառացի էր, ամիրայի դուստր, հմուտ հայերենին, ֆրանսերենին ու հունարենին: Լինելով ազգասեր ու բարեգործ մի կին, Նազը Վահանը մեծ ջանքեր է ներգրել արևմտահայ կրթական-լուսավորական շարժում ծավալելու գործում. նա է հիմնել Միջագյուղի Ս. Հովհաննիսյանց նշանավոր վարժարանը (1859) և Աղբառատախնամ տիկնանց ընկերությունը (1864):

Մինչև տասը տարեկան հասակը Սրբուհին ուսանել է Միջագյուղի ֆրանսիական դպրոցում: Այստեղ ստացած գիտելիքները չկարողացան զոհացնել ուշիմ և խելացի աղջկան, ուստի նրա հետագա դաստիարակությունն ստանձնում է Լորայրը՝ Հովհաննեսը: Նա բարձրագույն կրթություն էր ստացել Փարիզում և Կ. Պոլիս վերադառնալուց մեկ տարի անց, 1853 թ., հրատարակել «Սկզբունք քրմիական գիտության» աշխարհարար աշխատությունը: Հետագայում, 1860-ական թվականներից, Հովհաննեսը թողեց գիտությունը և ըն-

¹ «Մասիս», 1884, № 3741, էջ 318:

² Հայկական ՍՍԽ ԳԱ Գրականության և արվեստի թանգարան. Թ. Ազատյանի ֆոնդ, 17/1, էջ 331:

դուներով Վահան անունը նվիրվեց պետական գործունեության՝ զբաղելով մի շարք բարձր պաշտոններ (առևտրական գործոց փոխ-նախարար, կրթական, հանրագումար շինություն, դատական նախարարների խորհրդական և այլն)։ Նա վայելում էր Ծերենցի, Գրիգոր Ստյանի, Միքայել Փորթուզյանի փառալույսի, ինչպես նաև Կ. Պոլսի ֆրանսիական դեսպանի և այլոց մտերմությունը։ Այս անձնավորությունն էլ ահա դառնում է քրոջ առաջին ուսուցիչը՝ սովորեցնելով նրան ֆրանսերեն, բնական գիտություններ և պատմություն։

Ժամանակակիցներից ոմանք իրենց հիշողություններում՝ զանազան տեղեկություններ են հաղորդում Սրբուհի Տյուսարի երիտասարդական տարիների մասին։ Պատմում են, օրինակ, որ նա ֆրանսերենից բացի տիրապետում էր իտալերենին ու հունարենին, 12 տարեկան հասակում կարդում էր Պլուտարքոսի «Լեծ մարդոց կյանքը», աշխատությունը¹, աչքի էր ընկնում երաժշտական փայլուն ձիրքով և ամեն անգամ, երբ մոր հետ երևում էր Կոստանդնուպոլսի ազգային շրջաններում «զմայլանքի մրմունջներ առաջ կրերեր իր շուրջը՝ նույնքան իր ազնվականությամբ, որքան իր կանխահաս տաղանդին համբավավոր»²։ Այդ հուշերի մեջ հատկապես արժեքավոր է Սրբուհի Երեցյանի վկայությունը, որից օգտվել են Տյուսարի գրեթե բոլոր ուսումնասիրողները։ «Այդ Երիտրդը (Ս. Տյուսարը—Ա. Շ.),— գրում է նա,— իր բարեկամուհյաց շատերի նման եթե հայատյաց չէր, գոնե շատ օտարասեր էր։ Նա գեղեցիկ խոսում էր ֆրանսերեն, հունարեն, իտալերեն և անգլիերեն, հիանալի դաշնամուր էր զարնում և հայերենի մասին խոսք եղած ժամանակ ուղղղկան սևոտկան ասելով ծաղրում էր»³։

Թերևս այդպես էլ անցներ նրա կյանքը և հույ բարձր հասարակության մյուս զավակների նման նա էլ մնար օտարասիրտ, եթե մի բարեբախտ պատահություն օգնության չգար։ Բարեկամներից մեկի տանը Սրբուհին ծանոթացավ Մկրտիչ Պեշիկթաշլյանի հետ։ Մեծ բանաստեղծը իր համբավով ու կրակոտ հայրենասիրությամբ բորբոքեց օրիորդի նիրհած ազգային զգացմունքները, և Սրբուհին ցանկություն հայտնեց աշակերտել նրան։ Նաղլը Վահանը, որ ձգտում էր դատերը դարձնել ժողովրդի համար պիտանի մարդ, ինչ խոսք սիրով համաձայնում է։ Եվ ահա Սրբուհին 1863 թ. սկսում է հայերենի մասնավոր դասեր առնել։ Աշակերտուհու համար ուսուցիչը դարձավ մեծագույն հեղինակություն, որի անունը նա միշտ էլ արտասանում էր ակնածանքով։ Պեշիկթաշլյանը նրա մեջ արթնացրեց խորունկ սեր ու հետաքրքրություն դեպի մայրենի գրականությունն ու մշակույթը, ընդամենը մեկ տարում հմուտ դարձրեց ժամանակակից հայերենին ու գրաբարին⁴։ Սրբուհին, որ կարդացել էր միայն եվրոպական հեղինակներին, այժմ գիտեի հայոց պատմությունը, երգի վերածեց իր ուսուցչի գեթնության շարքի գործերից մեկը՝ «Մահ Քաջորդուն» հայրենասիրական բանաստեղծությունը։

Պեշիկթաշլյանը շուտ նկատեց, որ իր աշակերտուհին օժտված է «զարմանալի ուշիմութեամբն և քերթողասէր ախորժակօք»⁵ և արեց ամեն ինչ նրա

¹ Հայկական ՍՍՌ ԴԱ Գրականության և արվեստի թանգարան, Թ. Ազատյանի ֆոնդ, 17/1, էջ 331։

² Տ. Ա. [Տիգրան Արփիարյան], Օրվան մահերը, «Մասիս», 1901, N 2, էջ 30։

³ «Փորձ», 1877, գիրք շորթորդ, էջ 194։

⁴ Տե՛ս Մ. Պեշիկթաշլյանի նամակը Ա. Բաղրամյանին, «Բազմավեպ», 1939, էջ 253։

⁵ Նույն տեղում։

Համակողմանի զարգացման համար: Ստուգելի ազդեցությամբ Սրբուհին կատարեց իր գրական առաջին քայլերը: Այդ շրջանում նա հրապարակեց Մխիթարյանների, հատկապես Արսեն Բագրատունու պոեզիայով: Բաժանելով Պեշիկթաշլյանի հիացմունքը, Ս. Տյուսարը Բագրատունուն գրում է մի նամակ, որտեղ նրա «Հայկ դյուցազներ» իր վեպում ու ձոխ ուժի համար դասում է «չքնադադիւտ քերթուածոց» շարքը և խնդրում հեղինակի լուսանկարը¹: Սրբուհու ակնածալի վերաբերմունքը դրսևորվել է նաև «Ուղերձ առ Հ. [այր] Ա. [սեն] Գ. [ոմիտա] Բագրատունի» ոտանավորում²: 1860-ական թթ. Սրբուհին գրել է նաև ուրիշ գրարար բանաստեղծություններ, առավելապես ձոներ ու բնության դոկերդություններ, որոնք արժանացել են խստապահանջ ուսուցչի դրվատանքին: Այդ գործերից մեկը՝ «Գարուն» խորագրով մի երկարաշունչ բանաստեղծություն, Պեշիկթաշլյանի խնդրանքով տպագրության է հանձնարարել Ա. Բագրատունին³: «Գարունը» լույս տեսավ «Բաղմավեպ» հանդեսի 1864 թ. օգոստոսյան համարում: Բանաստեղծուհու խոսքն այստեղ արդեն անսպառնալի է. նա չի ձգտում հասնել հանդիսավորության, խոսքը չի համեմտում բաղմարարդ լառերով ու ձոռով արտահայտություններով: Ինչպես բնության զարթոնքի մի խանդավառ գովք է՝ հյուսիսից մառ երևակայությամբ ու իրական պատկերներով:

1868 թ. նոյեմբերի 29-ին մահացավ Մ. Պեշիկթաշլյանը, իսկ մի քանի օր անց «Մասիս» շաբաթաթերթում (N 878) երևաց Ս. Տյուսարի «Ի յիշատակ պ. Մ. Պեշիկթաշլյանի» ողբերգը: Ինչպես հրաբեկուն էր սիրած ուսուցչին, նրա պայծառ հիշատակին ձոնված սրտառուչ մի խոսք, մեծ բանաստեղծի ու հայրենասերի շիրմին դրված ամենաթարմ ծաղկեփունջը.

Հանգի՛ր, յուշ քո կեցցե ցորչափ աղնին ու լաւն,
Յորչափ հանճարն պաշտեսցի, հանգի՛ր, Ողբի՛...

Ս. Տյուսարի վաղ շրջանի (1860-ական թթ.) հայացքների գնահատման տեսակետից չափազանց ուշադրով է նրա վերաբերմունքը դեպի Գրիգոր Զիլինկիրյանի «Ծաղիկ» հանդեսը: Հայտնի է, որ ղմյուռնահայ նշանավոր դեմոկրատ անհաշտ պայքար էր մղում արևմտահայ պահպանողականության դեմ: Չկարողանալով այլևս հանդուրժել «Ծաղիկի» խմբագրի ազատախոհությունն ու մարտական գրոհները, ռեակցիան ավելի ու ավելի էր ուժեղացնում իր հալածանքները: Եվ ահա ներկայացավ պատեհ առիթը. Զիլինկիրյանն իր հանդեսի 1865 թ. մարտի 1-ի համարում տպագրեց «Ժոռն-ժաններու պարահանդեսը» վերնագրով մի անստորագիր թղթակցություն, որտեղ նկարագրված էր Իզմիրի (Զմյուռնիա) պարահանդեսներից մեկը: «Ծաղիկը» ծաղրում էր հայ երիտասարդներին, որոնք ժամերով կանգնում էին հայելու առաջ, պրճնրվում, զարդարվում գոհարեղեններով ու պարահանդես գնում՝ արկածներ որոնելու և Լվրոպական հոռի սովորությունները կապկելու համար: «Հայ աղջիկները, ինչպես նաև Իզմիրի երիտասարդաց մեծագույն մասը, — գրում էր հանդեսը, — ազգային ոգի և նախանձախնդրություն չունին: Կը թողուն ինչ

1 Տե՛ս «Բաղմավեպ», 1939, էջ 254 և 1940, էջ 26:

2 «Բաղմավեպ», 1939, էջ 255:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 253:

որ ազգային է, ինչ որ ավանդական է և իրենց կր սեփականեն ինչ որ օտարինն է՝ առանց ստանալ ուղեկու ասոր նաև այն հատկությունը, որ կը կազմե մտքին ազնվապետությունը»¹:

Գաղազած պահպանողականները Չիլինկիրյանին մատնեցին Դատաստանական ատյանին՝ ամբաստանելով անբարոյականության մեջ: «Ծաղիկի» խմբագիրը բանտարկվեց, իսկ հանգեսի հրատարակումը դադարեցվեց մի քանի շաբաթով: Չիլինկիրյանի գաղափարակից և մերձավոր բարեկամ Մատենոս Մամուրյանը (Վրույր), որ այդ տարիներին պաշտոնավարում էր Կ. Պոլսում, իր մի թղթակցությունում (1865, մարտի 30) պատմում է, թե ինչպիսի արձագանքներ է առաջ բերել «Ժեռն-Մաններուն պարահանդեսը» մայրաքաղաքում: Մի հավաքություն Մամուրյանի ուշադրությունն է դրավում մի «պեղանի և աշխույժ» օրիորդ՝ Ս. Վահանյանը (Տյուսա), որը ղարույթով դատապարտում է Իզմիրի հետադեմների քստմենելի գործերը: «Ծաղիկն անարգած է պարահանդեսին գեղանիներն,— ասում է օրիորդը,— այլ անոնց իրր պաշտպան կանգնող անձինք...»²: Նրա համոզմամբ Չիլինկիրյանը պետք է փառավորվի որպես «կարծյաց ազատության նահատակ»: Մամուրյանը «սիրուն ատենարանի» դատողությունների առթիվ նկատում է. «Երեղեղեմ օրիորդին այս պարզ ու իմաստալից խորհրդածությունները լսելով՝ գետնե գետին անցա. մերթ կզմայլելի անոր անկեղծության և Իզմիրի կանայքը պաշտպանելու և երիտասարդությանը դատապարտելու երկսայրի լեզվին վրա, մերթ կսրտմտեի, բո նորաբույս կույս մը մեղնե ավելի ազատամիտ՝ մեղի կանացի բնության վրա դառ տալու կհանդգնի, մանավանդ, երբ կնշմարեի, որ բազմականները ներքին ախորժ մը կզգային զիս անոր առջև շանթահար և ափ ՚ի բերան ընկած տեսնելով»³: Մ. Մամուրյանը ցանկություն է հայտնում, որ ասպագա սերունդի դատարարական համար այդպիսի կանայք շատ լինեն³:

Ճիշտ չէո լինի, անշուշտ, վերը բերված փաստից հանգել այն եզրակացության, թե արդեն 60-ական թթ. Ս. Տյուսարի մեջ մշակվել էր որոշակի աշխարհայացք: Այդ տարիները ավելի շուտ կարելի է դիտել որպես մի շրջան, երբ նրա մեջ սկսում են ծնվել հասարակական որոշ հետաքրքրություններ ու հայացքներ, որոնք վերջնականորեն ձևավորվեցին ավելի ուշ:

¹ «Ծաղիկ», 1865, № 107, էջ 358:

² Վրույր (Մ. Մամուրյան), Հայկական նամականի, Ջմյուռնիա, 1872, էջ 54: Թեև հեղինակը ուղղակիորեն չի տալիս Ս. Վահանյանի անունը (ինչպես որ պոլսահայ բազմաթիվ մտավորականների դիմանկարները գծագրելիս նրանց ներկայացնում է զանազան կեղծանուններով), սակայն մի վկայություն տարակույս չի թողում, որ խոսքը Պեշիկթաշլյանի աշակերտուհու մասին է: Ժամանակակիցներից մեկը՝ բանաստեղծ ու գրականագետ Միհրան Հովհաննիսյանը, Ալպույաճյանի «Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսարի (Վիպագիր)» աշխատության (Վենետիկ, 1901) մասին գրախոսականում հաստատում է, որ Սամուրյանի զրուցակիցը Ս. Վահանյանն է: Նա գրում է. «Իսկ Չիլինկիրյան, որ իր 107 թիվ Ծաղիկին մեջ գրածին համար դատափետվեցավ Ջմյուռնիո մեջ, հոս միայն (Կ. Պոլսում—Ա. Մ.) աշխույժ օրիորդ մը գտավ, որ իր գատը պաշտպանեց ակումբի մը առջև, ուր կը գտնվեր Մ. Սամուրյան, երբ տակավին գիվանագիր էր...»:

Այդ երբեմնի օրիորդը օր մը տիկին եղավ և Իզմիրի պարահանդեսին վրա ինչ որ կխորենը՝ նույնպես խորհեցավ իր միջավայրին վրա, ուստի գրիչը ձեռք առավ և գրեց...» (Մասիս, 1901, № 32, էջ 511):

³ Նույն տեղում, էջ 56:

2

Վրա հասան 1880-ական թվականները: Թուրքիայի պատմության մեջ սկսվեց սոսկումներով հայտնի «ղուլումի» ժամանակաշրջանը: Սուլթանը կիրառում էր մի հրեշավոր քաղաքականություն, որի նշանաբանն էր. «վերջ տալ հայկական հարցին՝ վերջ տալով հայերին»:

«Ամեն կողմ բանտ, արյուն, ծեծ, հալածանք, ահա մեզի համար 61-րդ հոդվածի գործադրությունը»¹, — Բեռլինի կոնգրեսից (1878) հետո ստեղծված իրադրությունը այսպես էր բնութագրում արևմտահայ խոշոր ղեկավար և Արփիարյանը (Հայկակ): Անասելիորեն ծանր էր հայության վիճակը: Գավառներում մոլեգնում էր սովը, ծայր էր առել գաղթականության անվերջ հոսանքը: Անկարող լինելով հանդուրժել բռնությունն ու սոցիալական կեղերումը, հայ աշխատավորները երազում էին այն օրը, երբ իրենք էլ իրենց ուստահայ եղբայրների նման կապատագրվեն օտար լծից: Համիդյան կառավարությունը մի կողմից առատ խոստումներ էր տալիս արևմտահայերի վիճակը «բարելավելու» մասին, իսկ մյուս կողմից բոլորովին էր մահմեդական հետամնաց խավերի ատելությունը նրանց նկատմամբ և արյան մեջ խեղդում ազատագրական ամեն մի ելույթ: Արդեն 1880 թ. Բ. Դուռը փորձում է «սաշտոնական լեզվի մեջ» արգելել «Հայաստան» բառի գործածությունը²: «Վա՛յ անոնց, որ կհանդգնին Հայաստան բառն արտասանել...», — գրում էր Հ. Պարոնյանը³:

Տնտեսական ու քաղաքական նման հեղձուցիչ մթնոլորտը անդրադառնում էր նաև հոգևոր կյանքի վրա: Բռնապետությունը խանձարուրի մեջ խեղդում էր ամեն մի ազատ խոսք ու պայծառ գաղափար: Ժողովուրդը մատնված էր հոգևոր ստրկության, փակված էր հայոց թատրոնը, արգելված էր ազգային երգարանների տպագրությունը, չէր կարելի հայրենասիրական ուսանավորներ արտասանել, մտցված էր գաղափար գրաքննություն: Վայրենի հայահալածությունն ու անլուր կեղերումներին զոհարելով էլու լիտանգն էր սպառնում հայ լեզվին ու մշակույթին: Այդ գործում իրենց զավրելի դերն էին խաղում արևմտյան երկրների վեղարավոր գործակալները՝ միսիոներները, որոնք մորեխի նման լցվել էին հայաշատ վայրերը և ոչինչ չէին խնայում մեր ազգային զգացմունքներն ու սովորությունները ժամ առաջ թաղելու համար:

Հայ առաջադեմ մտավորականությունը տոգորված էր ժողովրդի նյութական ու հոգևոր բազում կարիքները բավարարելու ազնիվ ցանկությամբ: Այդ գործում խոշոր դեր էին խաղում զանազան բարեգործական հաստատություններն ու դպրոցները, որոնք հիմնված էին հայաշատ վայրերում: Կրթական-լուսավորական ընկերություններն ու դպրոցները, մասնավորապես, այն սակավթիվ ապաստարաններից էին, ուր այսպես թե այնպես կարող էին իրենց ինքնուրույն գոյությունը պահպանել հայ լեզուն ու մշակույթը: Դա հիանալի էին գիտակցում մեր մտավորականության ականավոր ներկայացուցիչները, և բնավ պատահական չէ, որ նրանցից շատերը (Հ. Պարոնյան, Գր. Զոհրապ, Ա. Արփիարյան, Մ. Մամբուրյան, Գր. Զիլինկիրյան) գլխավորում էին լուսավորական օջախների աշխատանքները:

¹ «Մշակ», 1883, № 15:

² Տե՛ս «Մասիս», 1880, № 2718, «Փոփոք», 1880, № 1507:

³ Հ. Պարոնյան, Բնտիւր երկեր. գիրք I, Երևան, 1954, էջ 517:

1880 թ. Սրբուհի Տյուսարը կանգնեց «Դպրոցասեր տիկնանց ընկերության» գլուխ, որի նպատակն էր. իր իսկ խոսքերով ասած՝ «Մայրաքաղաքիս մեջ ձրի վարժապետանոց մը հաստատել և գալստական վարժարանաց համար վարժուհիներ պատրաստել»¹։ Հայ ընկերություններն ու գալոցները կարիք էին զգում նյութական անհրաժեշտ միջոցների, որոնց քաջակալությունը խախտում էր նրանց ծրագրերը։ Ահա թե ինչու հայ մտավորականները, ինչպես Տյուսարն էր գրում՝ «ստիպված են հասույթի միջոցներ հնարել... մեծագումար ծախուց դիմանալու համար»²։ Երամական միջոցների հայթայթումն էլ ևնդավ Ընկերության նորընտիր ատենապետի առաջնահերթ խնդիրներից մեկը։ Այդ նպատակով Տյուսարը կազմակերպեց մի շարք միջոցառումներ՝ հանգանակություններ, վիճակախաղ, դրոսանքներ, երեկույթներ, թատերական ներկայացումներ։ 1882 թ. փետրվարին նրա նախաձեռնությամբ Բերայում բացվում է հայ նկարիչների ու քանդակագործների ցուցահանդեսը, որի եկամուտը նույնպես տրամադրվեց ընկերությանը։ Եւ առաջին հայկական ցուցահանդեսն էր Պոլսում, որտեղ, ի միջի այլոց, ցուցադրվել են նաև Հ. Այվազովսկու մի քանի կտավներ³։ Տյուսարը Դպրոցասեր տիկնանց ընկերության ատենապետ մնաց մինչև 1887 թ. և այդ տարիներին նրա գործադրած ջանքերը ապարդյուն չանցան։ Ընկերության վարժարանի աշակերտների թիվը արդեն 1881 թ. կրկնապատկվեց⁴։ Այժմ կային նաև մասնագետ ուսուցիչներ։ 1885 թ. դպրոցը տվեց առաջին շրջանավարտները, որոնք մեկնեցին գալաո՝ պաշտոնավարելու⁵։

Արդեն այդ տարիներին Տյուսարի հռչակը լայնորեն տարածվել էր։ Նա առաջին հայն էր, որին մայրաքաղաքի հունական գաղութի ներկայացուցիչները հրավիրեցին կարգալու հատուկ դասախոսություն Բերայի հունական Նշանավոր քանախոսարանում։ Դասախոսությունն ընթերցվեց ֆրանսերեն, 1882 թ. մարտի 12-ին, և աշխույժ արձագանքներ առաջ բերեց Պոլսի հայ և էվրոպական մամուլում, ինչպես նաև Թիֆլիսում։ Մի քանի օր անց դասախոսությունը թարգմանվեց հայերեն և տպագրվեց «Թերճեմանը էֆքյար» («Թարգման կարծյաց») հայատառ տաճկերեն թերթում՝ «Հայերու մտական հառաջդիմության վրա քանի մը խոսք» խորագրով։ Տյուսարն այստեղ նպատակ էր դրել հույն և ֆրանսիացի ունկնդիրներին համառոտակի ծանոթացնել վերջին հիսնամյակում հայերի ձեռք բերած հոգևոր առաջընթացին, սակայն նրա զծած պատկերը չէր արտացոլում իրերի իսկական վիճակը։ Համիդյան թանձր ունակցիան փակել էր նրա բերանը։ Տյուսարը, որ քաջահմուտ էր հայ ժողովրդի անցյալին և գիտեր ժամանակակից պատմության պայծառ դեմքերին, ստիպված էր շմտաբերել նույնիսկ Արովյանի անունը։ Ավելին, նա իր դասախոսության մեջ «Հայաստան» բառն անգամ չի համարձակվել գործածել։ Այդ առթիվ Ա. Արփիարյանը ցավով էր գրում. «Կրնա՞ք հավատալ թե հայ դասախոսը (Տյուսարը—Ա. Ն.) զգուշացավ հիշել մի անգամ իսկ Հայաստան անունը մեր ժամանակակից պատմության վերաբերյալ մասերուն մեջ»։ «Քաղա-

1 «Թերճեմանը էֆքյար», 1882, № 1383։

2 Նույն տեղում։

3 «Մեղու Հայաստանի», 1882, № 14։

4 «Մասիս», 1881, № 2312։

5 «Դպրոցասեր տիկնանց ընկերություն, հիմնական կանոնադրություն», Կ. Պոլիս, 1910, էջ 5։

նպատակն»։ Ավելի ծայրահեղները դրողին համարում էին անբարոյականության ջատագով և հայ կնոջը խորհուրդ էին տալիս ընդհանրապես «արհամարհոտ հպարտություն» ունենալ վեպերի նկատմամբ, «թե իսկ քո մայրն գրած էլլա այն և ստիպած զքեզ կարդալու»¹։

«Գրական և իմաստասիրական շարժում» հանդեսի խմբագիր Եղիա Տեմիր-ձիպաշյանը մի նամակով խնդրեց Տյուսարին՝ մասնակցել «Մայտայի» շուրջը բորբոքված վիճարանություններին։ Տյուսարը մերժեց այդ հրավերը. նա գերադասեց քննադատությանը պատասխանել նոր ստեղծագործություններով։ Եվ իրոք, 1884 թ. դրողը հրապարակեց «Սիրանուշը», իսկ երկու տարի անց՝ «Արարսիա կամ Վարժուհին» վեպերը, որոնք «Մայտայի» գաղափարական շարունակությունն են։

«Սիրանուշը» վեպում՝ Տյուսարը պաշտպանում է ազատ սիրո, ավելի ճիշտ՝ սիրով ամուսնության պահանջը, մերժում բռնի, հարկադրական ամուսնությունը։ Ո՞վ է վեպի հերոսուհին. մի ոչ ունեոր ընտանիքի գուստր, որը հնազանդելով ծնողի կամքին, ամուսնանում է հարուստ ու ապականված Դարեհյանի հետ։ Սիրանուշը անկարող է սիրել շփացած ու անբարոյական ամուսնուն, բայց Դարեհյանը նույնպես չի սիրում նրան, նա ամուսնացել է ամուսնացած լինելու համար միայն և շարունակում է իր նախկին կյանքը։ Հեղինակը ցույց է տալիս, թե որքան խախուտ են անսեր և դասային հակադրությունների վրա կառուցված ընտանիքները։ Սիրանուշը, այդ բարի ու ազնիվ կինը, ֆիզիկապես անզամ կործանվում է, որովհետև բռնաբարվել են նրա սիրտն ու կամքը, որովհետև դուրսվելն ունեցող հասարակական բիրտ հարաբերությունների հետևանքով «ամուսնություններն առավել փառասիրության և վաճառականության խնդիր դարձած են, քան թե մտերմական հողերու...»²։

Տյուսարը Սիրանուշի ճակատագրին հակադրում է նրա ընկերուհու՝ Զարուհու ճակատագիրը։ Զարուհու ամուսինը՝ Հրանտը, իր կնոջ համար անկարող է ստեղծել այն ճոխ ապրուստը, ինչ ազնվական Դարեհյանը։ Բայց նրանք երջանիկ են, քանի որ սիրում են միմյանց։ Իսկական երջանկությունը ոչ թե դրամի մեջ է, այլ փոխադարձ զգացման, ահա Տյուսարի եզրակացությունը, որ լավ է արտահայտված Հրանտի հետևյալ խոսքերի մեջ. «Ինչո՞ւ մենք երջանիկ ենք, վասնզի մեր մեջ համասարություն կա, վասնզի մենք երկուքս ալ համեստ ընտանիք ենք, երկուքս ալ անարժաթ՝ իրարու վրա կը հենուենք, զիրար կը պաշտպանենք, զիրար կը խնամենք, իրարու վրա կը դուրդուրենք»։

«Սիրանուշը» վեպը թույլ է տալիս ավելի պարզ պատկերացում կազմել Տյուսարի աշխարհայացքի մասին։ Հեղինակի համոզմամբ կինը կարող է դառնալ հասարակության լիարժեք անդամ միայն այն դեպքում, եթե նա լինի ոչ միայն լավ մայր ու ամուսին, այլև ապրի հանրային կյանքով։ Զարուհին որպես «ամուսին երանելի էր, մայր սիրական և պիտանի անդամ բնկերության»³, նույն միտքը ավելի որոշակիորեն արտահայտված է Տյուսարի օրագրության հրապարակված պատասխաններում. «...ինչո՞ւ դուրսվելն ունենա կինը հանրային կյանքեն հեռացնելու կանխորոշ սղին», — դրում է նա⁴, և դա, անշուշտ, լավ կողմից է բնութագրում նրա աշխարհայացքը։

¹ «Ընտանիք», 1883, № 4, էջ 62։

² Ս. Տյուսար, Երկեր, էջ 167։

³ Նույն տեղում, էջ 282 (բնագծումը մերն է—Ա. Ե.)։

⁴ Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Կ. Պոլիս, 1929, էջ 74։

Ժամանակին անբարյացակամ քննադատները մեղադրել են Տյուսարին, որ նա բավարարվել է կնոջ համար «սիրային հարաբերությանց նկատմամբ միայն»՝ ազատություն պահանջելով և չեն խորշել նույնիսկ գրողին «բողոքյան պաշտպան» որակելուց¹։ Սակայն Տյուսարի ստեղծագործության բարեխիղճ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա համար հիմնականը, որոշիչը եղել է աշխատանքի հարցը։ Իրավացի էր Զապել Եսայանը, երբ գրում էր. «...Իր (Տյուսարի—Ա. Ն.) գլխավոր թեզը աշխատանքայինն է»²։ Մենք տեսանք, որ հրապարակախոս-Տյուսարին շատ էր հետաքրքրում աշխատանքի հարցը։ Նա կարծում էր, որ հասարակության մեջ կինը կարող է երջանկանալ, եթե ապրի սեփական աշխատանքով։ Տիկին Սիրան նույնպես քարոզում էր աշխատանքի փրկարար անհրաժեշտության գաղափարը և նրա խորհրդով է, որ Մայտան փորձում է գործարան բացել, ուր «թաղեցի չքավոր կանայք ապրուստի ապահով միջոց մի կարենան գտնել»³։ «Սիրանույշ» վեպում նույնպես հեղինակը անց է կացնում այն միտքը, թե երջանկության հասնելու կարևոր նախապայմանը աշխատանքն է։ Զարուհին երջանիկ է ոչ միայն նրա համար, որ սիրում է ամուսնուն և սիրվում նրանից, այլև նրանով, որ սեփական աշխատանքով է ապահովում իր իսկ գոյությունը։

Աշխատանքի գաղափարը Տյուսարն ավելի հիմնավորեց իր վերջին՝ «Արաքսիա կամ Վարժուհին» (1886) վեպում։ Տյուսարն այստեղ պատկերում է Կ. Պոլսի մի խեղճ ընտանիքի կյանքը։ Արաքսիան, Վարսամյանների դուստրը, սեփական ջանքերի շնորհիվ դիմանում է բազմաթիվ դժվարությունների և կարողանում է թե՛ ընտանիքի համար բարեկեցիկ վիճակ ստեղծել և թե՛ գանել սեփական երջանկությունը։ Նա ամուսնանում է ունեոր վաճառական Ներսես Արզարյանի հետ, որը գնահատում է այդ աղքատ աղջկա հոգեկան բարձր հատկությունները։ Այս ստեղծագործության մեջ, սակայն, Տյուսարի աշխարհայացքի ստվերոտ կողմերը նորից զգացնել են տալիս իրենց։ Հասարակական այն հարաբերությունները, որոնց դոճր դարձավ Սիրանույշը և որոնց կրքոտ քննադատությամբ հանդես էր գալիս հեղինակը, այս վեպում հեշտությամբ պարսվում են Արաքսիայի կամքի և աշխատասիրության առաջ։ Դժվար չէ նկատել, որ Տյուսարն այդպես է վարվել ապացուցելու համար իր հրապարակախոսական հույսանքներում առաջադրած գրույթը՝ աշխատանքը երջանկացնում է մարդուն։ Նա չէր հասկանում, որ իր այդ ազնիվ գաղափարը կարող է իրականանալ միայն այնպիսի հասարակության մեջ, որը կառուցված չէ դրամի և անբարոյականության վրա։

Սակայն, չնայած դրան, Տյուսարի ամբողջումը աշխատանքի դերի ու նշանակության մասին մնում է անաջադիմական։ Բնորոշ է, որ Գրիգոր Արծրունին, որը համանման հայացքներ էր պաշտպանում արևելահայ իրականության մեջ, «Արաքսիա...» վեպի տեղեկեցր համարում էր «վերին աստիճանի համակրելի, հարգելի և օգտավետ»⁴։ Իհարկե, կնոջն աշխատանքի հրավեր կարողալով, Տյուսարը չէր տեսնում դրա հասարակական մեծ հետևանքները, բայց նա ելնում էր այն ճշմարիտ նախադրյալից, որ աշխատանքը կնոջը կտա «անկախ

¹ Տե՛ս, օրինակ, մոլի պահպանողական Հակոբ Հաճյանի «Ազատություն կանանց» հոդվածը («Մաղիկ», 1887, № 47, էջ 378)։

² «Մաղիկ», 1903, № 13, էջ 151։

³ Ս. Տյուսար, Երկեր, էջ 142։

⁴ «Մշակ», 1886, № 146։

վիճակ»¹։ «...խոսքն այն մասին չէ, — դրում է Լենինը, — որ պետք է հավատա-
ռեցնել կնոջն (տղամարդու հետ — Ա. Շ.) աշխատանքի արտադրողականու-
թյան, աշխատանքի ծավալի, նրա տեղեկության մեջ, աշխատանքի պայմաննե-
րում և այլն, այլ խոսքն այն մասին է, որ կլինի տղամարդու համեմատությամբ
չհնչվի իր տնտեսական դրությունը»²։

«Սիրանուշը» և «Արաքսիան...», մնալով ուժանտիկական, «Մայտայի»
համեմատությամբ ավելի վիպական են։ Այս գործերում հրապարակախոսա-
կան շունչը գերիշխող չէ։ Տյուսարը մտքեր ու տեսակետներ է զարգացնում,
բայց փորձում է դրանք բխեցնել կենդանի գործողություններից ու կենսական
հարաբերություններից։ Գեղարվեստական իմաստով հատկապես հաջողված է
«Սիրանուշը», ուր բավական կենդանի են արտացոլված սոցիալա-
լայնության կյանքն ու կենցաղը, տրված է կանացի հոգեբանության որոշ կողմերի
պատկերը, ստեղծված է Դարեհյանի ուշադրավ կերպարը։

4

«Արաքսիա կամ Վարժուհին» վեպով ավարտվում է Տյուսարի վիպական
գործունեությունը։ Սակայն նրա կարապի երգը եղավ «Որդեկորույս քերթող
մը» արձակ բանաստեղծությունը, որի կատարմամբ հանդես եկավ Պետրոս
Աղամյանը՝ իր հորեղյանի ժամանակ (1888, ղեկավարելով)։ Դրանից հետո
Ս. Տյուսարը դադարեց ստեղծագործելուց։

1887—1888 թթ. Տյուսարը շարունակում էր զբաղվել հասարակական
գործունեությամբ։ Այդ տարիներին նա ստանձնել էր Պոլսի Խասագյուղ թաղում
գործող Ասիական ընկերության լսարանի հովանավորությունը, որտեղ կար-
դացվում էին դասախոսություններ՝ բարեգործական նպատակներով (այս ըն-
կերությունը գալուցների համար էժան կամ ձրի դասագրքեր էր հայթայթում)։
Տյուսարը լինում էր նաև գալուցներում, օգնում դասատուներին ու աշակերտ-
ներին։ Իր նամակներից մեկում նա պատմում է թե ինչպես ինքն այցելել է
Պոլսի Կենտրոնական վարժարանը. «...Շատ դո՛հ եղա հոն տեսած ու քննած-
ներես», — գրում է նա։ Տյուսարը նյութական օժանդակություն էր կազմա-
կերպում նաև Դալֆայան նշանավոր որբանոցին, որտեղ խնամվում էին մի
քանի տասնյակ սաներ։ Բայց առողջության վիճակը խանգարում էր նրան
ծավալելու իր օգտակար գործունեությունը։ 1889 թ. նոյեմբերին, բուժվելու
նպատակով նա իր դստեր հետ մեկնում է Փարիզ։ Ճանապարհին վիպասանու-
հին կանգ է առնում բուլղարական Ֆիլիպպե (այժմ Պոլիդիոլ) քաղաքում, ուր
տեղի հայ հասարակությունը ջերմ ընդունելություն է կազմակերպում նրա
ռադիկալին։ Մոտ երկու տարի մնալով Փարիզում Տյուսարը շփվում է Ֆրանսիա-
յի մի շարք մտավորականների հետ, լինում թանգարաններում, թատրոններում
ու համերգներում։ Հայ վիպասանուհին ծանոթացավ ու մտերմացավ նշանա-
վոր գրող ու խմբագիր Ժյուլիետ Ադանի հետ։ Տյուսարը երաժշտական բա-
ցառիկ ընդունակություններով օժտված իր դստերը՝ Դորինն ներկայացրեց

¹ «Արևիկյան մամուլ», 1881, սեպտեմբեր, 19 349—350։

² Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 33—34 (ընդգծումը մերն է — Ա. Շ.)։

³ Ս ա յ ի Տ ա յ ե Յ ի, Հուշագիր կենաց և գործունեության նախկին կայաներական լու-
սանկարիչ Գևորգ Ապառյուհի, Վենետիկ, 1929, էջ 162։

Շարլ Գունոյին ու Ամսլրուալ Ռոմային, որոնք նրա համար փայլուն ապագա գուշակեցին:

Փոքր ինչ ապաքինված, բայց պաշտառ հույսերով լի Սրբուհի Տյուսաբը թողեց Փարիզը՝ Սակայն վերահաս դժբախտությունը փշրեց նրա կյանքը՝ Պոլիս վերադառնալուց մի քանի ամիս անց, 1891 թ. սեպտեմբերին, թոքախտից մահացավ 19-ամյա Դորին: Այդ անփութարինելի կորուստը Տյուսաբին կտրեց ոչ միայն գրականությունից, այլև արտաքին աշխարհից: «Բո մեջ,— դրել է այդ առթիվ նշանավոր բանաստեղծ, արձակագիր ու հասարակական գործիչ Սիպիլը,—մայրը կնոջմեն ու դրագետեն ավելի զորավոր եղավ»¹: Տյուսաբն այրեց իր անձնական արխիվը, մոռացության մատնեց ամեն ինչ՝ նա մահացավ 1901 թ. հունվարի 16-ին: Հայ մամուլն ու մտավորականությունը Պոլսում ու Թիֆլիսում, Ջմյուռնիայում ու Ալեքսանդրոպոլում, Մարսելում ու Նյու-Յորքում, Վենետիկում ու Կահիրեում արձագանքեցին «տաղանդավոր վիպագրի», «հազվագյուտ հայ կնոջ», «ինքնատիպ գրագիտուհու» տխուր մահվանը: «Նա մեռավ, բայց նրա տնունը չի մեռնի մեր գրականության մեջ»,— Տյուսաբի մահվան առթիվ դրած իր հոդվածն այսպես էր ավարտում Լեոն²: Հիբրալի, որպես ստեղծագործող Տյուսաբը ուրույն տեղ է գրավում մեր գրականության պատմության մեջ՝ նրա վեպերը, որ արևմտահայ ռոմանտիկմի վերջին արտահայտությունն էին, նկատելի հետք են թողել հայ հասարակական մտքի վրա: Ժամանակակիցների պատմում են, որ «Մայտան» հայ կանանց ամենալայն շրջանների համար դարձել էր աղոթագիրք, իսկ հեղինակը մամուլում մեծարվում էր որպես «հզոր միտք», «իդական սեռին գրական ծաղիկ», «Արևելից ժողովրդի Սան» (Ջանդ): Ջարուհի Գալեմբերյանը վկայում է, որ Տյուսաբի վեպերի և հատկապես «Մայտայի» սլոգանությունն այնքան վիթխարի էր, որ եթե նրա հեղինակը չլիներ «ընտանեկան ու ընկերական բարձր դիրքով կին», ապա «թեևս խաչակրության դատապարտելի այդ ազատամիտ գրագիտուհին»³: Տյուսաբը, ինչպես ասվել է, հայ անդրանիկ վիպասանուհին է: Նրանից հետո միայն մեր գրականության երկու հատվածներում հանդես եկան կին գրողները՝ Սիպիլը, Անայիսը (Եվփիմե Ավետիսյան), Ջ. Գալեմբերյանը, Ջանել Եսայանը և ուրիշներ, իսկ նրա շեփորած գաղափարները արժանացան այնպիսի խոշոր վարպետների ուղղորդությանը, ինչպիսիք են Շիրվանզադեն ու Նար-Դոսը:

СРБУИ ТЮСАБ

А. С. ШАРУРЯН

(Р е з ю м е)

Србуи Тюсаб — первая армянская романистка, поднявшая вопрос о равноправии женщин. Первые творческие шаги Тюсаб относятся к 60-м годам XIX века, когда она была ученицей известного армянского поэта М. Пешикташляна. Наиболее же полноценную литературную деятель-

¹ «Լույս», 1903, N 41, էջ 644:

² «Մուրճ», 1901, N 7, էջ 197:

³ Ջ. Գալեմբերյան (Եվտերյան), Կյանքիս ճամբան, Անթիլիան, 1952, էջ 334:

ность она развернула в 80-х годах, в условиях жестокой султанской реакции. Тюсаб выступала с публицистическими статьями («Воспитание женщин», «Несколько слов о бездействии женщин», «Принцип труда женщин» и др.), в которых отстаивала принцип равноправия женщин, требовала для них права на труд, образование и равный брак. Эти статьи явились прелюдией литературному творчеству Тюсаб.

Первый роман Тюсаб «Майта» (1883) вызвал оживленную дискуссию в западноармянской печати. Реакционные деятели обвиняли писательницу в безнравственности, но Тюсаб не отступала перед шумной критикой и вскоре опубликовала романы «Сирануйш» (1884) и «Араксия или учительница» (1886), в которых развивала свои идеи. «Женщина — ничтожная жертва общества», — такой смелый вывод сделала Тюсаб в своих произведениях. Она высмеивала идеи французской революции о «свободе и равенстве», называя их «просто высокими словами», которые ничего не дали женщине. Однако Тюсаб ошибочно считала, что женщина может обрести истинную свободу в рамках современного ей общества. В этом и кроются истоки ее политического романтизма. Произведения Тюсаб, как романтика, имеют ряд художественных недостатков. Но, несмотря на это, ее романы составляют определенную ступень в развитии армянской литературы. Наследство Тюсаб до сих пор сохраняет свою историко-литературную ценность.